Արձանագրություն N 2

ՀՀ Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի կարիքների համար Մեծավան համայնքի կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Մեծավան	«16» «փետրվարի» 2018թ. ժ 14:00
Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Դումիկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ս. Տոմերյան,
	Տ. Խաչատրյան,
	Ա. Խանաղյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Մակոսյան

1. **Տեղեկություններ <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

/Ա. Դումիկյան/

Ընդունել ի գիտություն, որ <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են 2018թ. փետրվարի 16-ին ժամը 14:00-ին, ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. **<<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

/Ա. Դումիկյան/

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1.	<<ՇԻՆ>> ՍՊԸ	ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գետափնյա 45

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

/Ա. Դումիկյան/

3.1 <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Մեծավան համայնքի կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերում			
Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը		
<<ՇԻՆ>> ՍՊԸ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
	17592000	-	17592000

3.2. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

/Ա. Դումիկյան/

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<<ՇԻՆ>> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

/Ա. Դումիկյան/

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ՇԻՆ>> ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված միակ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

/Ա. Դումիկյան/

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 19.02.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը 19.02.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

/Ա. Դումիկյան/

7.1. <<ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ գնահատման արդյունքերի հաստատման նիստը հրավիրել ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության տրամադրման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 14:00-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Դումիկյան
Անդամներ՝		Ս. Տոմերյան,
		Տ. Խաչատրյան,
		Ա. Խանաղյան
Քարտուղար՝		Գ. Մակոսյան